# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՊՊԾ-ՄԱԱՊՁԲ-21/18-1

ք. Երևան «9» 11 2021թ.

Պետական պահպանության ծառայությունը, ի դեմս Պետական պահպանության ծառայության պետ Ս▯ Հովհաննիսյանի, որը գործում է «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի և Պետական պահպանության ծառայության կանոնադրության հիման վրա, մի կողմից և <<Ֆարմ Նաիրի>> ՍՊԸ, ի դեմս տնօրեն Ն. Արիկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդի կողմից Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

**3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Պայմանագրի գինը կազմում է 441719 (չորս հարյուր քառասունմեկ հազար յոթ հարյուր տասնինը) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք

բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար

հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը,

իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար փոխադարձ հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**
**Պետական պահպանության ծառայություն**
**ք.Երևան, Պռոշյան փ.1-ին փակուղի 20**
**ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն**
**Հ/հ 900011004497**
**ՀՎՀՀ 00006796**

**Պետ Ս. Հովհաննիսյան**

**ՎԱՃԱՌՈՂ**
**<<Ֆարմ Նաիրի>> ՍՊԸ**
**Իրավ. հասցե: Երևան, Չարոբյան փ. 2**
**Գործ. հասցե: Երևան, Տիտոգրադյան փ.14**
**Կոնվերս Բանկ ՓԲԸ**
**Հ/Հ 1930037458850100**
**ՀՎՀՀ 00105694**

**Տնօրեն՝ Ն. Արիկյան**

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ծագման երկիր/արտադրող | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավորի գինը | ընդհանուր գինը* | ընդհանուր քանակը | Մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| 1 | 33191560/1 | Շնչառության ցուցասարքեր (Շնչառության նկատմամբ հսկողության և իրականացնելու համար) | Չինաստան | Պուլսօքսիմետր Մարտկոցներ AAA, Երաշխիք 1 տարի | հատ | 3850 | 3850 | 1 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 1 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 3 | 33621590/1 | Ֆուրոսեմիդ c03ca01 | Борисовский ХФЗ | Ֆուրոսեմիդ 2մլ №10 | հատ | 350 | 350 | 1 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 1 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 4 | 33661126/1 | ացետիլսալիցիլաթթու, պարացետամոլ, կոֆեին N02BA51, N02BA71 | ՌԴ | Ասկոֆեն –Պ հաբ №10 | հատ | 195 | 29250 | 150 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 150 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 5 | 33611100/1 | օմեպրազոլ a02bc01 | Трож | Օմեպրազոլ հաբ 20մգ №10 | հատ | 435 | 6525 | 15 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 15 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | 33642210/2 | պրեդնիզոլոն a07ea01, c05aa04, d07aa03, d07xa02, h02ab06, r01ad02, s01ba04, s01cb02, s02ba03, s03ba02 | Борисовский ХФЗ | Պրեդնիզոլոն մազ 10գ 0.5% | հատ | 250 | 1000 | 4 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 4 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 7 | 33661122/1 | պարացետամոլ n02be01 | ՌԴ | Պարացետամոլ հաբ 0.5գ №10 | հատ | 97 | 19400 | 200 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 200 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 8 | 33691136/1 | նատրիումի քլորիդ a12ca01, b05cb01, b05xa03 | Ликвор, ЕрХФЗ, Фарматек | Na cl 0,9%%250մլ | հատ | 335 | 3350 | 10 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 10 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 9 | 33141118/1 | անձեռոցիկներ | ՀՀ | Ստերիլ բժշկական անձեռոցիկներ 45см x 29см №5 | հատ | 250 | 12500 | 50 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 50 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 11 | 33621280/1 | ֆենոբարբիտալ, էթիլբրոմի զովալերիանաթթու N05CB02 | Կոեվել Մոյզել Բախ | Վալոկորդին կաթիլ 20մլ | հատ | 1270 | 2540 | 2 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 2 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 12 | 33691138/2 | գլյուկոզ b05cx01, v04ca02, v06dc01 | ЕрХФЗ | Գլյուկոզա 40% 5 մլ №10 | հատ | 460 | 460 | 1 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 1 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 13 | 33631290/1 | իբու պրոֆե ն c01eb16, g02cc01, m01ae01, m02aa13 | Рекитт Бенкизер Хелскэр | Նուրոֆեն ֆորտե 400мг №12 | հատ | 850 | 12750 | 15 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 15 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 14 | 33671129/1 | Նիտրոֆուր ալ , տետրակայի ն (տետրակայի նի հիդրոքլոր իդ), ֆենազոն S02DA30 | ՀՀ | Ֆուրալգին 5մլ Ականջի կաթիլներ | հատ | 245 | 1225 | 5 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 5 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 15 | 33661117/1 | կատվախոտի հանուկ N05CM09 | Բելառու ս | Կատվախոտի հանուկ հաբ N50 | հատ | 200 | 10000 | 50 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 50 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 16 | 33691138/1 | գլյուկոզ b05cx01, v04ca02, v06dc01 | LIQVOR | Գլյուկոզա 5%% 250 մլ | հատ | 340 | 1700 | 5 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 5 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 18 | 33691236/2 | քլորոպիրա մին /քլորոպիրա մինի հիդրոքլոր իդ/ R06AC03, D04AA09 | Egis | Սուպրաստին հաբ 25 մգ №20 | հատ | 1260 | 6300 | 5 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 20 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 19 | 33671118/2 | ցիպրոֆլօք սացին (ցիպրոֆլօք սացինի հիդրոքլոր իդ), դեքսամեթա զոն S03CA01 | LIQVOR | Ֆլոկսադեկս 10մլ Աչքի կաթիլներ | հատ | 1965 | 5895 | 3 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 3 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 21 | 33141136/1 | կաթետերնե ր | B.BRAUN | Կաթետերներ | հատ | 235 | 940 | 4 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 4 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 22 | 33631230/1 | պովիդոն յոդ d08ag02, d09aa09, d11ac06, g01ax11, r02aa15, s01ax18 | Էգիս | Բետադին քսուք 20,0գ | հատ | 2010 | 10050 | 5 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 5 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 23 | 33141131/1 | Արյուն վերցնելու ժապավեն ամրակներով (ժգուտ) | ՀՀ | ժգուտ արյուն նականգ | հատ | 130 | 520 | 4 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 4 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 24 | 33691136/2 | նատրիումի քլորիդ a12ca01, b05cb01, b05xa03 | Ликвор, ЕрХФ3, Фарматек | Na cl 0,9% 100մլ | հատ | 315 | 3150 | 10 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 10 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 25 | 33611170/4 | դրոտավերին a03ad02 | SANOFI | Նո-շպա դիտ. 40մգ x 100 | հատ | 2060 | 8240 | 4 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 4 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 26 | 33671127/1 | նաֆազոլին (նաֆազոլին նիտրատ) R01AA08 | Արսանիտ, ՀՀ | Նաֆթիզին 0.1 % 10 մլ | հատ | 205 | 6150 | 30 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 30 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 27 | 33691232/1 | նիմեսուլիդ MO1AX17, MO2AA26 | Берлин-Хеми | Նիմեսիլ №30 | հատ | 3200 | 19200 | 6 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 6 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 28 | 33691202/2 | էտամզիլատ - B02BX01 | Сандоз-Лек | Դիցինոն амп. 250мг/2мл №1 | հատ | 232[illegible]5 | 2325 | 10 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 10 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 29 | 33621360/1 | գլիցերիլ եռնիտրատ (նիտրոգլիցերին) c01da02, c05ae01 | LEKXIM | Նիտրոգլիցերին 0.5մգ N40 | հատ | 360 | 1080 | 3 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 3 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 30 | 33621300/1 | Էթիլբրոմի զովալերիանատ, ֆենոբարբիտալ, պղպեղային անանուխի յուղ N05CM | ՌԴ | Կորվալոլ 25մլ | հատ | 166 | 664 | 4 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 4 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 31 | 33661125/4 | մետամիզոլ (մետամիզոլ նատրիում), պիտոֆենոն (պիտոֆենոնի հիդրոքլորիդ), ֆենպիվերինիումի բրոմիդ N02BB52, A03DA02, N02BB52 | actavis | Սպազմալգոն N50 | հատ | 3540 | 7080 | 2 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 2 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 32 | 33661125/5 | մետամիզոլ (մետամիզոլ նատրիում), պիտոֆենոն (պիտոֆենոնի հիդրոքլորիդ), ֆենպիվերինիումի բրոմիդ N02BB52, A03DA02, N02BB52 | Բելառուս | Սպազմատոն հաբ №50 | հատ | 700 | 1400 | 2 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 2 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 33 | 33661127/3 | մետամիզոլ (մետամիզոլ ի նատրիում) N02BB02 | Ֆարմստանդարտ ՌԴ | Անալգին հաբ 500 մգ N10 | հատ | 95 | 9500 | 100 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 100 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 34 | 33661153/2 | դեքսամեթազոն a01ac02, c05aa09, d07ab19, d07xb05, d10aa03, h02ab02, r01ad03, s01ba01, s01cb01, s02ba06, s03ba01 | KRKA | Դեկսամետազոն ամպ 4մգ/1մլ №25 | հատ | 2255 | 2255 | 1 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 1 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 35 | 33671113/2 | սալբուտամոլ r03ac02 | Պոլֆարմա Լեհաստան | Սալբուտամոլ 4մգ N25 | հատ | 1600 | 4800 | 3 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 3 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 36 | 33691140/2 | ացետիլցիստեին r05cb01, v03ab23, s01xa08 | SANDOZ, HEXAL | ԱՑՑ լոնգ 600մգ N10 | հատ | 2875 | 11500 | 4 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 4 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 37 | 33691200/1 | սեննոզիդներ A,B – A06AB06 բուսական ծագման դեղ | Ципла, Индия | Սենադե N 20 | հատ | 200 | 4000 | 20 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 20 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 38 | 33691238/2 | պարացետամոլ, կոֆեին, կոդեին /կոդեինի ֆոսֆատ/ N02BE51 | Глаксо СмитКлайн Консюмер | Սոլպադեին Актив №12 | հատ | 1465 | 14650 | 10 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 10 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 41 | 33141112/5 | սպեղանիներ (պլաստիր) | ՉԺՀ | Սանտավիկ N10 | հատ | 40 | 8000 | 200 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 200 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 42 | 33141142/10 | ներարկիչներ | B.BRAUN | Ներարկիչներ 10մլ | հատ | 45 | 450 | 10 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 10 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 43 | 33141142/11 | ներարկիչներ | B.BRAUN | Ներարկիչներ 20մլ | հատ | 65 | 650 | 10 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 10 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 44 | 33141142/8 | ներարկիչներ | B.BRAUN | Ներարկիչներ 3մլ | հատ | 30 | 300 | 10 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 10 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 45 | 33141142/9 | Ներարկիչներ | B.BRAUN | Ներարկիչներ 5մլ | հատ | 35 | 350 | 10 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 10 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 46 | 33211120/2 | գլյուկոզ G-col /գլյուկոզի որոշման թեսթ-հավաքածու | Գերմանիա, Շվեյցարիա | Գլյուկոմետր՝ մարտկոցով թեստ-երիզներ անհատական օգտագործման գրիչ միանգամյա օգտագործման ասեղներ Սարքը պետք է չափումը իրականացնի առավելագույնը 10 վրկ., հիշողության մեջ պետք է պահպանի 500 չափման արդյունք և պահպանված ցուցանիշները հիմք ընդունելով պետք է հաշվարկի 7,14,30 և 90 օրվա միջին Accu-Check Active | հատ | 7200 | 7200 | 1 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 1 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 47 | 33611110/4 | ալյումինիումի հիդրօքսիդ + մագնեզիումի հիդրօքսիդ a02aa04 a02ab01 g04bx01 | Санофи-Авентис | Մաալոքս 400мг/400мг №40 | հատ | 2150 | 4300 | 2 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 2 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 49 | 33611120/3 | ֆամոտիդին A02BA03 | Բորիսովյան ԲԴԳ | Ֆամոտիդին 20մգ N20 | հատ | 630 | 3150 | 5 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 5 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 50 | 33611120/4 | ֆամոտիդին A02BA03 | GEDEON RICHTER | Կվամատել 20մգ 5մլ N 5 | հատ | 3700 | 3700 | 1 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 1 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 51 | 33611200/2 | լոպերամիդ a07da03 | Янссен (Джонсон и Джонсон) | Իմոդիում 25մգ N20 | հատ | 2535 | 12675 | 5 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 5 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 52 | 33631290/6 | իբուպրոֆեն c01eb16, g02cc01, m01ae01, m02aa13 | Սանոֆի-Ավենտիս | Դիպրիլիֆ 50գ | հատ | 2165 | 4330 | 2 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 2 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 53 | 33621470/1 | մոքսոնիդին C02AC05 | Abbott | Ֆիզիոտենզ 0.2մգ N28 | հատ | 3130 | 3130 | 1 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 1 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 54 | 33621700/1 | մետոպրոլոլ c07ab02 | EGIS | Էգիլոկ 25մգ N60 | հատ | 1045 | 3134 | 3 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 3 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 55 | 33621750/2 | Նիֆեդիպին c08ca05 | Տեխնոլոգ, Ուկրաինա | Նիֆեդիպին դհտ. 10մգ x 50 | հատ | 805 | 2415 | 3 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 3 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 56 | 33631230/2 | պովիդոն յոդ d08ag02, d09aa09, d11ac06, g01ax11, r02aa15, s01ax18 | ՆՕՔԻ ՀՀ | Պովիդոն յոդիդ 10%- 30մլ | հատ | 600 | 18000 | 30 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 30 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 57 | 33631260/2 | յոդ D08AG03 | ՀՀ | Յոդ 5 % 15մլ | հատ | 200 | 6000 | 30 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 30 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 58 | 33631284/1 | հակահիստամինային միջոցներ՝ պարբերական կիրառման համար | Байер | Էրիուս 5մգ N10 | հատ | 2675 | 13375 | 5 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 5 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 59 | 33631290/5 | իբու պրոֆե և c01eb16, g02cc01, m01ae01, m02aa13 | Берлин-Хеми | Միգ 400մգ N10 | հատ | 1280 | 38400 | 30 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 30 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 60 | 33631300/3 | կետոպրոֆեն m01ae03, m02aa10 | Sandoz-Lek | Կետոնալ դուո 150մգ կապս N30 | հատ | 2345 | 9380 | 4 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 4 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 61 | 33631390/2 | նոնիվամիդ, նիկոբօքսիլ M02AX10 | SANOFI | Ֆինալգոն մազ 20գ | հատ | 2255 | 4510 | 2 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 2 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 62 | 33631460/2 | Դեքսպանթենոլ D03AX03,R01AX10 | ՌԴ | Պանտենոլ սփրեյ | հատ | 1935 | 5805 | 3 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 3 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 64 | 33661122/2 | պարացետամոլ n02be01 | УПСА САС, Франция | Էֆֆերալգան 500մգ N16 | հատ | 1630 | 8150 | 5 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 5 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 65 | 33141178/2 | Դեղերի ներարկման համակարգեր N1 | Չինաստան | Սիստեմա N 1 | հատ | 100 | 2000 | 20 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 20 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 66 | 33621641/1 | հականեխիչ (անտիսեպտիկ) – ախտահանիչ միջոցներ | ՀՀ | Ջրածնի պերօքսիդ 3% 50/100 մլ | հատ | 145 | 2900 | 20 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 20 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 67 | 33691176/8 | այլ դեղորայք | ՀՀ | Ամոնիումի լուծույթ 10% 30մլ | հատ | 105 | 3150 | 30 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 30 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 68 | 33621290/2 | Էպինեֆրին (ադրենալին) a01ad01, b02bc09, c01ca24, r01aa14, r03aa01, s01ea01 | Ուկրանիա | Ադրենալին 1մլ N10 | հատ | 720 | 720 | 1 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 1 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 69 | 33691176/9 | Այլ դեղորայք | Ցադրան | Դրամինա N10 | հատ | 1515 | 4545 | 3 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 3 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 70 | 33621270/3 | մենթոլի լուծույթ մեթիլ իզովալերաթթվում C01EX | Բելառուս, Ուկրաինա | Վալիդոլ հաբ N10 | հատ | 95 | 2850 | 30 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 30 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 71 | 33651135/3 | քլորամֆեն իկոլ d06ax02, d10af03, g01aa05, j01ba01, s01aa01, s02aa01, s03aa08 | Ուկրաինա | Լևոմիցիտին N10 | հատ | 550 | 3300 | 6 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 6 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 72 | 33631290/7 | իբուպրոֆեն c01eb16, g02cc01, m01ae01, m02aa13 | Ռեքիթ Բենքիսեր Հելթքեյր | Նուրոֆեն 100մգ 5մլ | հատ | 1020 | 2040 | 2 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 2 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 73 | 33691144/3 | նատրիումի թիոսուլֆատ v03ab06 | ЕрХФ3 | Նատրիումի թիոսուլֆատ 5մլ №10 | հատ | 550 | 550 | 1 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 1 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 74 | 33611350/3 | ասկորբինաթթու g01ad03, s01xa15, a11ga01 | ՀՀ | Վիտամին C 5մլ №10 | հատ | 600 | 1200 | 2 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 2 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 75 | 33611150/3 | պանկրեատին a09a | Берлин-Хеми | Մեզիմ ֆորտե N20 | հատ | 605 | 3025 | 5 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 5 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 76 | 33141110/7 | Վիրակապեր | Չինաստան | Սպիրտի տամպոններ N100 | հատ | 900 | 3600 | 4 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 4 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 77 | 33671119/5 | պարացետամոլ, ֆենիլէֆրին (ֆենիլէֆրինի հիդրոքլորիդ), ասկորբինաթթու N02BE51, N02B | Գլաքսո Սմիթկլայն Կոնսյումեր | Կոլդրեքս մաքս գրիպ N10 | հատ | 3700 | 18500 | 5 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 5 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 78 | 33691176/10 | Այլ դեղորայք | Ռեքիթ Բենքիսեր Հելթքեր | Ստրեպսիլս Ինտենսիվ մեղր-կիտրոն դհտ. x 24 | հատ | 1475 | 7375 | 5 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 5 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |
| 79 | 33141110/1 | Վիրակապեր | ՀՀ | Բինտ 7x 14սմ | հատ | 132 | 3960 | 30 | ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի-20 | 30 | մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը |

* 1,21,23. 41,42,43,44,45,46,65,76,79 չափաբաժիններով նախատեսված ապրանքները առանց ԱԱՀ են:

**ապրանքի պիտանիության ժամկետները գնորդին հանձնման պահին պետք է լինեն հետևյալը՝

ա. 2,5 տարվանից ավելի պիտանելիության ժամկետ ունենալու դեպքում հանձնման պահին պետք է ունենան առնվազն 24 ամիս մնացորդային պիտանելիության ժամկետ,

բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող ապրանքները հանձնման պահին պետք է ունենան ապրանքի ընդհանուր պիտանիության ժամկետի 12 ամիս,

գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, ապրանքի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, ապրանքը հանձնման պահին կարող է ունենալ ապրանքի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:

ա. 2,5 տարվանից ավել պիտանելիության ժամկետ ունենալու դեպքում հանձնման պահին պետք է ունենան առնվազն 24 ամիս մնացորդային պիտանելիության ժամկետ,
բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող ապրանքները հանձնման պահին պետք է ունենան ապրանքի ընդհանուր պիտանիության ժամկետի 12 ամիս,
գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, ապրանքի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, ապրանքը հանձնման պահին կարող է ունենալ ապրանքի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:

Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
| --- | --- |
| Պետական պահպանության ծառայություն<br>ք.Երևան, Պռոշյան փ.1-ին փակուղի 20<br>ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/հ 900011004497<br>ՀՎՀՀ 00006796 | <<Ֆարմ Նաիրի>> ՍՊԸ<br>Իրավ. հասցե: Երևան, Չարբախ փ. 2<br>Գործ. հասցե: Երևան, Տիգրանյան փ.14<br>Կոնվերս Բանկ ՓԲԸ<br>Հ/Հ 1930037458850100<br>ՀՎՀՀ 00105694 |
| Պետ Ս. Հովհաննիսյան | Տնօրեն՝ Ն. Արիկյան |

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին` ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 33191560/1 | Չնչառության ցուցասարքեր (Չնչառության նկատմամբ հսկողության իրականացնելու համար) | - | - | - | - | - | - | - | - | - | - | 3850 | 3850 | 3850 |
| 3 | 33621590/1 | Ֆուրոսեմիդ c03ca01 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 350 | 350 | 350 |
| 4 | 33661126/1 | ացետիլսալիցիլաթթու, պարացետամոլ, կոֆեին N02BA51, N02BA71 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 29250 | 29250 | 29250 |
| 5 | 33611100/1 | օմեպրազոլ a02bc01 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 6525 | 6525 | 6525 |
| 6 | 33642210/2 | պրեդնիզոլոն a07ea01, c05aa04, d07aa03, d07xa02, h02ab06, r01ad02, s01ba04, s01cb02, s02ba03, s03ba02 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 1000 | 1000 | 1000 |
| 7 | 33661122/1 | պարացետամոլ n02be01 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 19400 | 19400 | 19400 |
| 8 | 33691136/1 | Նատրիումի քլորիդ a12ca01, b05cb01, b05xa03 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 3350 | 3350 | 3350 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 9 | 33141118/1 | անձեռոցիկներ | - | - | - | - | - | - | - | - | - | - | 12500 | 12500 | 12500 |
| 11 | 33621280/1 | ֆենոբարբիտա, էթիլբրոմիզովալերիանաթթու N05CB02 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 2540 | 2540 | 2540 |
| 12 | 33691138/2 | գլյուկոզ b05cx01, v04ca02, v06dc01 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 460 | 460 | 460 |
| 13 | 33631290/1 | իբուպրոֆեն c01eb16, g02cc01, m01ae01, m02aa13 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 1275<br>0 | 1275<br>0 | 12750 |
| 14 | 33671129/1 | նիտրոֆուրալ, տետրակային (տետրակայինի հիդրոքլորիդ), ֆենազոն S02DA30 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 1225 | 1225 | 1225 |
| 15 | 33661117/1 | կատվախոտի հանուկ N05CM09 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 10000 | 10000 | 10000 |
| 16 | 33691138/1 | գլյուկոզ b05cx01, v04ca02, v06dc01 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 1700 | 1700 | 1700 |
| 18 | 33691236/2 | քլորոպիրամին /քլորոպիրամինի հիդրոքլորիդ/ R06AC03, D04AA09 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 6300 | 6300 | 6300 |
| 19 | 33671118/2 | ցիպրոֆլօքսացին (ցիպրոֆլօքսացինի հիդրոքլորիդ), դեքսամեթազոն S03CA01 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 5895 | 5895 | 5895 |
| 21 | 33141136/1 | կաթետրներ | - | - | - | - | - | - | - | - | - | - | 940 | 940 | 940 |
| 22 | 33631230/1 | պովիդոն յոդ d08ag02, d09aa09, d11ac06, g01ax11, r02aa15, s01ax18 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 10050 | 10050 | 10050 |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 23 | 33141131/1 | Արյուն վերցնելու ժապավեն ամրակներով (ժգուտ) | - | - | - | - | - | - | - | - | - | - | 520 | 520 | 520 |
| 24 | 33691136/2 | Նատրիումի քլորիդ a12ca01, b05cb01, b05xa03 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 3150 | 3150 | 3150 |
| 25 | 33611170/4 | դրոտավերին a03ad02 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 8240 | 8240 | 8240 |
| 26 | 33671127/1 | Նաֆազոլին (նաֆազոլինի նիտրատ) R01AA08 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 6150 | 6150 | 6150 |
| 27 | 33691232/1 | Նիմեսուլիդ MO1AX17, MO2AA26 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 19200 | 19200 | 19200 |
| 28 | 33691202/2 | Էտամզիլատ - B02BX01 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 2325 | 2325 | 2325 |
| 29 | 33621360/1 | գլիցերիլ եռնիտրատ (նիտրոգլիցերին) c01da02, c05ae01 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 1080 | 1080 | 1080 |
| 30 | 33621300/1 | Էթիլ բրոմիզովալերիանատ, ֆենոբարբիտալ, պղպեղային անանուխի յուղ N05CM | - | - | - | - | - | - | - | - | - | - | 664 | 664 | 664 |
| 31 | 33661125/4 | մետամիզոլ (մետամիզոլ նատրիում), պիտոֆենոն (պիտոֆենոնի հիդրոքլորիդ), ֆենպիվերինիումի բրոմիդ N02BB52, A03DA02, N02BB52 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 7080 | 7080 | 7080 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 32 | 33661125/5 | մետամիզոլ (մետամիզոլ նատրիում), պիտոֆենոն (պիտոֆենոնի հիդրոքլորիդ), ֆենպիվերինիումի բրոմիդ N02BB52, A03DA02, N02BB52 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 1400 | 1400 | 1400 |
| 33 | 33661127/3 | մետամիզոլ (մետամիզոլի նատրիում) N02BB02 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 9500 | 9500 | 9500 |
| 34 | 33661153/2 | դեքսամեթազոն a01ac02, c05aa09, d07ab19, d07xb05, d10aa03, h02ab02, r01ad03, s01ba01, s01cb01, s02ba06, s03ba01 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 2255 | 2255 | 2255 |
| 35 | 33671113/2 | սալբուտամոլ r03ac02 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 4800 | 4800 | 4800 |
| 36 | 33691140/2 | ացետիլցիստեին r05cb01, v03ab23, s01xa08 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 11500 | 11500 | 11500 |
| 37 | 33691200/1 | սենոզիդներ A,B – A06AB06 բուսական ծագման դեղ | - | - | - | - | - | - | - | - | - | - | 4000 | 4000 | 4000 |
| 38 | 33691238/2 | պարացետամոլ, կոֆեին, կոդեին /կոդեինի ֆոսֆատ/ N02BE51 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 14650 | 14650 | 14650 |
| 41 | 33141112/5 | ասպեղանիներ (պլաստիր) | - | - | - | - | - | - | - | - | - | - | 8000 | 8000 | 8000 |
| 42 | 33141142/10 | ներարկիչներ | - | - | - | - | - | - | - | - | - | - | 450 | 450 | 450 |
| 43 | 33141142/11 | ներարկիչներ | - | - | - | - | - | - | - | - | - | - | 650 | 650 | 650 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 44 | 33141142/8 | Ներարկիչներ | - | - | - | - | - | - | - | - | - | - | 300 | 300 | 300 |
| 45 | 33141142/9 | Ներարկիչներ | - | - | - | - | - | - | - | - | - | - | 350 | 350 | 350 |
| 46 | 33211120/2 | գլյուկոզ G-col /գլյուկոզի որոշման թեսթ-հավաքածու | - | - | - | - | - | - | - | - | - | - | 7200 | 7200 | 7200 |
| 47 | 33611110/4 | ալյումինիումի հիդրօքսիդ + մագնեզիումի հիդրօքսիդ a02aa04 a02ab01 g04bx01 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 4300 | 4300 | 4300 |
| 48 | 33611120/3 | ֆամոտիդին A02BA03 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 3150 | 3150 | 3150 |
| 50 | 33611120/4 | ֆամոտիդին A02BA03 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 3700 | 3700 | 3700 |
| 51 | 33611200/2 | լոպերամիդ a07da03 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 12675 | 12675 | 12675 |
| 52 | 33631290/6 | իբուպրոֆեն c01eb16, g02cc01, m01ae01, m02aa13 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 4330 | 4330 | 4330 |
| 53 | 33621470/1 | մոքսոնիդին C02AC05 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 3130 | 3130 | 3130 |
| 54 | 33621700/1 | մետոպրոլոլ c07ab02 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 3134 | 3134 | 3134 |
| 55 | 33621750/2 | նիֆեդիպին c08ca05 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 2415 | 2415 | 2415 |
| 56 | 33631230/2 | պովիդոն յոդ d08ag02, d09aa09, d11ac06, g01ax11, r02aa15, s01ax18 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 18000 | 18000 | 18000 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 57 | 33631260/2 | յոդ D08AG03 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 6000 | 6000 | 6000 |
| 58 | 33631284/1 | հակահիստամինային միջոցներ՝ պարբերական կիրառման համար | - | - | - | - | - | - | - | - | - | - | 13375 | 13375 | 13375 |
| 59 | 33631290/5 | իբուպրոֆեն c01eb16, g02cc01, m01ae01, m02aa13 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 38400 | 38400 | 38400 |
| 60 | 33631300/3 | կետոպրոֆեն m01ae03, m02aa10 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 9380 | 9380 | 9380 |
| 61 | 33631390/2 | Նոնիվամիդ,նիկոբօքսիլ M02AX10 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 4510 | 4510 | 4510 |
| 62 | 33631460/2 | Դեքսպանթենոլ D03AX03,R01AX10 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 5805 | 5805 | 5805 |
| 64 | 33661122/2 | պարացետամոլ n02be01 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 8150 | 8150 | 8150 |
| 65 | 33141178/2 | Դեղերի ներարկման համակարգեր N1 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 2000 | 2000 | 2000 |
| 66 | 33621641/1 | հականեխիչ (անտիսեպտիկ) – ախտահանիչ միջոցներ | - | - | - | - | - | - | - | - | - | - | 2900 | 2900 | 2900 |
| 67 | 33691176/8 | այլ դեղորայք | - | - | - | - | - | - | - | - | - | - | 3150 | 3150 | 3150 |
| 68 | 33621290/2 | էպինեֆրին (ադրենալին) a01ad01, b02bc09, c01ca24, r01aa14, r03aa01, s01ea01 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 720 | 720 | 720 |
| 69 | 33691176/9 | Այլ դեղորայք | - | - | - | - | - | - | - | - | - | - | 4545 | 4545 | 4545 |
| 70 | 33621270/3 | մենթոլի լուծույթ մեթիլ իզովալերաթթվում C01EX | - | - | - | - | - | - | - | - | - | - | 2850 | 2850 | 2850 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 71 | 33651135/3 | քլորամֆենիկոլ d06ax02, d10af03, g01aa05, j01ba01, s01aa01, s02aa01, s03aa08 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 3300 | 3300 | 3300 |
| 72 | 33631290/7 | իբուպրոֆեն c01eb16, g02cc01, m01ae01, m02aa13 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 2040 | 2040 | 2040 |
| 73 | 33691144/3 | նատրիումի թիոսուլֆատ v03ab06 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 550 | 550 | 550 |
| 74 | 33611350/3 | ասկորբինաթթու g01ad03, s01xa15, a11ga01 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 1200 | 1200 | 1200 |
| 75 | 33611150/3 | պանկրեատին a09a | - | - | - | - | - | - | - | - | - | - | 3025 | 3025 | 3025 |
| 76 | 33141110/7 | Վիրակապեր | - | - | - | - | - | - | - | - | - | - | 3600 | 3600 | 3600 |
| 77 | 33671119/5 | պարացետամոլ, ֆենիլէֆրին (ֆենիլէֆրինի հիդրոքլորիդ), ասկորբինաթթու N02BE51, N02B | - | - | - | - | - | - | - | - | - | - | 18500 | 18500 | 18500 |
| 78 | 33691176/10 | Այլ դեղորայք | - | - | - | - | - | - | - | - | - | - | 7375 | 7375 | 7375 |
| 79 | 33141110/1 | Վիրակապեր | - | - | - | - | - | - | - | - | - | - | 3960 | 3960 | 3960 |

**ԳՆՈՐԴ**

**Պետական պահպանության ծառայություն**
**ք.Երևան, Պռոշյան փ.1-ին փակուղի 20**
**ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն**
**Հ/հ 900011004497**
**ՀՎՀՀ 00006796**
**Պետ Ս. Հովհաննիսյան**

**ՎԱՃԱՌՈՂ**

**<<Ֆարմ Նաիրի>> ՍՊԸ**
**Իրավ. հասցե: Երևան, Չարենցի փ. 2**
**Գործ. հասցե: Երևան, Տիտոգրադյան փ.14**
**Կոնվերս Բանկ ՓԲԸ**
**Հ/Հ 1930037458850100**
**ՀՎՀՀ 00105694**
**Տնօրեն՝ Ն. Արիկյան**